շատակեալքն ընդ Լինաց ՃԻՂԲՔ բնակէին 'ի ստորոտս լերանց Նահանգիս, և գլխաւոր քաղաք էր Նոցա ՅՈՒ, ուր Ս. Գրիգորիս քարոզեաց: Ի Նուազել սերունդեան Հայոց և Աղուանից՝ Պարսք և ապա Հագարացիք և յետոյ դարձեալ Պարսք տիրեցին կողմանցս, և հաստատեցին կուսակալ մեծիշխան, որ և կոչեցաւ Շրուան-Շահ. որոց 'ի յետին դարս փոխանակեցին խանք Պարսից. և 'ի սկիզբն դարուս Ռուսք գրաւեցին զերկիրն, և յամին 1820 ըստ օրինի ռուսական աշխարհաց հաստատեցին վարչութիւն և կուսակալ 'ի Շէմախի քաղաքի, յորոյ անուն կոչի և նահանգն համօրէն. և արդ տրոհի 'ի գաւառս հինգ, Լահիչ, Քօթուն, Պէրկուշէթ, Քասրիստան և Սալիան. յորս են միահամուռ իբրև 400 գեօղք և աւանք բնակեալք, բնակիչք իբրև 140,000, յորս 12,000 հայք, իբրև հազար մի Հրեայ, այլն ամենայն մահմետականք Պարսք և Թաթարք և սերունդք Արաբացւոց:

187. Ա. ԼԱՀԻՋ գաւառ 'ի հիւսիսի և յարևմուտս նահանգին՝ կայ, և գլխաւոր տեղի 'ի նմա է համանուն աւանն 'ի ստորոտս լերանց: — Ի հարաւոյ նորա երկրորդ գաւառն ՔՕԹՈՒՆ, յորում մայրաքաղաք նահանգին ՇԱՄԱԽԻ կամ ՇԷՄԱԽԻ քաղաք հին, (զոր հիմնադրէն պէսպէս կարծիք են անհաւատութք), յահեկէ Փիր-Սաղադ գեղոյ 'ի բարձու 2200'. ընդարձակ և անպարիսպ, քարաշէն տամբք և մզկիթք, իջևանօք կարաւանաց և մեծ շուկայիւ, և ամուր գղեկաւ կուսակալին զօրապետի. ունի բաղում գործարանս ընտիր մետաքսի, զոր բերէ երկիրն բարգաւաճ: Բն. 18,000, յորս 1000 երդ Հայ, որոց 4 եկեղեցիք են և եպիսկոպոս որ նստի 'ի վանս Սուրբն գեղջ: Հին աթոռ Շրուան-Շահին 'ի հիւսիսոյ Շէմախեայ կայր՝ ՇՐՈՒԱՆ կոչեցեալ, և բերդն կԻՓՈՓԱՆ ուր նստէր շահն. զոր յԱԻՐ դարու էառ Դաւիթ Վրաց արքայ. և աւերակք նորա մնան ցարդ: Բաղում Ճանապարհք կարաւանաց ձգին 'ի Շամախեայ յայլևայլ գէմս: — Յարևմտից Շէմախեայ առ Աքսու գետով կայ Նորն Շամախի բարգաւաճեալ առ Նաասրը շահիւ, այլ յետ մահու նորա բնակիչքն դարձան 'ի Հին քաղաքն: — Ժամաւ մերձ է 'ի քաղաքն Սաղիան գիւղն վերոյիշեալ, ուր և վանք յանուն Ս. Ստեփանոսի շինեալ յամին 1660: Կայ և այլ մենաստան 'ի Մարդի գիւղ 'ի հարաւոյ քաղաքին, նորոգեալ յամին 1680: — Գ գաւառն ՊԷՐԿՈՒՇԷԹ յարևմտակողմն կայ Կուրայ, դաշտավայր ընդարձակ. իսկ Դ՝ ՔԱՊՐԻՍՏԱՆ որ և ԽԱՆԶՕՊԱՆ 'ի հարաւոյ Շէմախեայ ձգի ցսահմանս Պաքուայ և Սալիանու, թուի յանուն կԷսրայ այսպէս կոչեցեալ: Կան 'ի սմա աւերակք քաղաքի միոյ առ Մարդի գիւղիւ որ 'ի հարաւոյ Շէմախեայ 'ի վերայ արքունի Ճանապարհին: Մասն է գաւառս Փայտակարան աշխարհի Հայոց, որ և ԿԱՋԲԲ, քանզի յանգի 'ի Ծովեղերս:

188. Ե Գաւառն ՍԱԼԻԱՆ որ է մասն Մուղան անապատի, կայ յարևմտից հարաւոյ Քապրիստանայ, և յելից հարաւոյ Քէպէրլինայ, յելից Մոզանայ Պարսից. և յելից կուսէ պատեալ է 'ի Ծովէ, յոր Թափի ընդ այս գաւառ խառնուրդն Կուր-Երասխ գետոց՝ յարևելից կուսէ լեզուաձև Թերակղզոյն Սալիանայ, որ և սրաձեւ կարկառի 'ի Ծով ընդ հարաւ կոյս, լիճ 'ի միջն անդ 'ի Ծայրին ունելով, և պարեխաս շուրջ 'ի Ծովուն, և գուբս նաւթի 'ի Ծովեղերսն: Նշանաւոր է գաւառս վասն նաւարկութեան մեծի գետոյն, զի մինչև ցխառնուրդսն գնան նաւք մեծամեծք, և անտի 'ի վեր փոքրունք առ վայր մի ընդ Կուր և ընդ Երասխ, և բերեն վաճառս 'ի շահաստանաց Կաղբից, և ձուկն անբաւ 'ի Ծովէն, որոյ գլխաւոր վաճառանոց է քաղաքն ՍԱԼԻԱՆ կառուցեալ յանկեան բաժանման գետոյն 'ի կրկին առաջս, (յորոց նուազագոյնն ընդ հարաւ արևմտից դիմէ և բաժանեալ 'ի բազում առուս Թափի 'ի Ծով). քաղաքն իբրև երիւք ևեթ փարսախաչք հեռի 'ի Ծովէ, ժողովի ինն է կաւակերտ կարմիր տանց 15,000 բնակչաք, և մեծ ծրկնատեան. 200,000 Ֆռանգաց բաժ է սերունդեանն յորսոյ ձկանցն, որոց գլխաւոր է սաղ-դին, յորմէ զաղնիւ աղկիթն ձկան գործեն (խաւեար). զյոլովութիւն ձկանցս որսան 'ի բերանոյ գետոցն և 'ի վեր մինչև հուսկ 'ի խառնուրդս նոցին, թէպէտ և անդր ևս քան զայն յառաջեն ձկունքն 'ի կրկին գետս Հայոց և Վրաց. որոց արբուցեալ զաշխարհն երկոսին աստանօր զրաւին հոսանք 'ի սպառուածս Հայ աշխարհի: — Ատանօր 'ի դէպ է լինել և ՔԱՏՏԱՊԱՐԱՆԻ հեռաւոր քաղաքի Հայոց որպէս կոչէ խորոնեցին, ուր Թագ կապեաց Սանատրուկ Արշակունի յետ մահուանն Տրդատայ. և 'ի մղոնաչափութիւնս ուրեք Հայոց քաղաքաց՝ հընդգիւք ևեթ մղոնօք տարակաց 'ի Ծովէն նշանակի, և նոյնքան 'ի ՎԱՐԴԱՆԱԿԵՐՏ աւանէ. որոց հարկ է մերձ յայժմուս Սալիան լինել, ուրանօր և աւերակք գոն հնոյ քաղաքի. և չէ պարտ շփոթել զքաղաքս ընդ Տփխեաց և Պարտաւայ, որպէս ոմանք փայտակարան կոչեցին և զնոսին:

Ի. ԹԱԼԻՇ ՆԱՀԱՆԳ

189. Նահանգս այս որ 'ի հարաւոյ կայ Սալիանայ և 'ի մեջ Կասպից Ծովու, յարևելից Ատրպատականի և 'ի հիւսիսոյ Կիլանայ Պարսից, (յորոց հանին զսա Ռուսք յամին 1812), վերջին սահման էր Հայոց 'ի հարաւոյ արևելից, և ոչ բովանդակին, այլ որպէս թուի հիւսիսային կողմն ևեթ մասն էր Փայտակարան աշխարհի, և գեան Պաշարոտ որ սահման հատանէ ընդ Մուղան՝ բերէ զանուն ԲԱՂԱՌՈՏ և ՌՈՎՏԻԲԱՂԱ գաւառաց Կաղբիցն Հայոց, և ԱՌՈՒՍՆ աւան զԱՌՈՍՊԻԺԱՆի: Ի վաղ ժամանակս ազգ Կասպից բնակեալ էր յերկրիս, և Դելք և Դելումք 'ի հարաւոյ կուսէ. Հայոց նուաճեալ զհիւսիսային մասն կոչեցին յանուն Փայտակարան քաղաքի, այլ և 'ի հին անուն ազգին և Ծովուն կոչեր ԿԱՋԲԲ: Արևմտակողմն երկրին լեռնախիտ է և բարձր, արևելեանն հարթ և բարեբեր, ջերմ և բարուրք կլիմայիւ, վասն որոյ և յաջողէ անդ մշակութիւն հարաւասէր բուսոց: Յերիս գաւառս տրոհի նահանգս, ՅԱՐՔԵԻԱՆ, ՍԷՓԷՏԱՐ և ԼԷՆԿՈՐԱՆ, յորս միահամուռ 235 շէնք